

631.86

Ա-87

631.86

ՀՈՒՆ
ԱԹԵ-ԱՊՀ-ԿԱՐԱՎԱՏ

ԴՐՈՒ. Խ. ԱՐԽԵՊԵԳԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՂԲԻ ՈԳՏԱ-
ԳՈՐԾՈՒՄԸ ԴԱՇՏԵՐԻ
ՅԵՎ ԲԱՆՉԱՐԱՆՈՑՆԵՐԻ
ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՅԱՄԱՐ

ԱՅԵ-ԼԻԿԵ-
ՎՈՐՈՒԹՅՈՒ-
ՆԱԾԿԱՐԱՎԱ

№ 7

ՊՈՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

22 FEB 2013

04 AUG 20

631.86


4-87

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
№ 7 ՍԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 7

Մ

ՊՐՁ. Խ. ԱՐՄԵԴՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԱՂԲԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
ԴԱՇՏԵՐԻ ՑԵՎ ԲԱՆՉԱՐԱՆՈՑՆԵՐԻ
ՊԱՐԱՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



Խ. ԱՐՄԵԴՅԱՆ
Հայկ
Հայոց պատմության պահապահ

15225-57

Յանքսերի տարածության մաքսիմալ լայնացումն ու բերքի մաքսիմալ չափերի հասցնելն առաջիկա գարնանացանի կամպանիայի հիմնական խնդիրներից մեկն ե կազմում։ Այդ հանգամանքը հրամայական պահանջ ե դնում մեղ վրա, անհապաղորեն, հենց այսոր ևեթ, հաշվի առնել մեր արամադրության տակ գանվող բոլոր միջոցները։

Անշուշտ, այդ հարցում մեքենա-տրակտորային կենտրոնները և մեքենա-տրակտորային ջոկատները պիտի հսկայական գեր կատարեն։ Սակայն այդ մեքենայական սարքավորումները, կարող են միայն այն գեպքում իրենց արդարացնել, յեթե դաշտերն իր ժամանակին խելացի կերպով պարարտացնենք։ Զե՞ վոր ամենորդա փորձառությունը ցուց ե տալիս, վոր սկզբում, անբերը դաշտերը, համապատասխան պարարտացումից հետո, վերածվում են խոռանառ արոտատեղերի և բանջարանոցների։ Ինչպես յեղել ե այդ Ռուսական «Պերեկոպում», ուր հողերի 98% /ը բաղկացած ե յեղել կավից և վորձարարից, վորոնք ներկայում մեծ հաջողությամբ վերածվել են բանջարանոցների։

Ներկալումս, իբրև պարաբռացնող նյութ, գործ են ածվում հանքալին նյութեր, ինչպես և մարդկալին ու կենդանիների աղբն ու թափթափուկները։ Գյուղատնտեսական հետապոտությունները հաստատում են, վոր հողի պտղավետացման գործում մարդկալին ու կենդանիների աղբն ավելի առաջերակություններ ունի, քան հանքալին նյութերը։ Այսինչ մարդկալին որդանիգմի արտադրաբները հաղվազըուտ դեպքերում են միայն ոգտագործվում իբրև պարաբռացնող նյութ։

Դրա զլխավոր պատճառներից մեկը հանդիսանում է այն, վոր մեզ մոտ բացակայում և բնակելի վայրերի անմաքրությունների արտահանման գործի կանոնավոր կազմակերպումը։ այսինչ այս գործի բացիոնալ կազմակերպությունը, առաջին հերթին, ներկայացնում է առաջնակարգ նշանակություն ունեցող սանիտարական ձեռնարկություն։

Դեռ շատ հնում, Հոնաստանում և Հռոմում, ուշադրություն են դարձրել այն բանի վրա, վոր մարդկալին աղբի ու մնացորդների կուտակումը հանդիսանում է զանազան հիվանդությունների պատճառներից մեկը։

Դրա համար ել այն ժամանակվա «սանիտարական մարմիններն» ամեն կարելի միջոցներ

ելին վնասում, վորպեսզի բնակելի վայրերից հեռացնեն այն բոլոր նյութերը, վորոնք ապականում ենին հողը։ Բայց Հոնաստանի և Հռոմի անկումից հետո, աստիճանաբար մոռացության մատնվեցին բոլոր կարեոր սանիտարական նվաճումները, զրանց թվում նաև այն հնարակորությունները, վորոնց միջոցով կարելի էր լինում հեռացնել հոսուն աղբաջրերը։

Ծուտով վրա հասան մռայլ ժամանակներ մարդկալին պատճության մեջ, իերբ մարդն սկսեց ավելի շատ զբաղվել իր հոգու փրկությամբ, բոլորսպին անտես անելով մարմնի հոգսերը։ Դրա համար ել բնավ զարմանալի չե, վոր այդ զարաշքջանում համաճարակ հիվանդությունները սոսկալի չափերի հասան։ Յեվ դա միանգամայն բնական եր. չե՞ վոր, ըստ միջնադարյան քրիստոնէական աշխարհայցքի, «աստծու պատիմների» գեմ պալքարելը միանդամայն անթուլյատրելի էր։

Առաջին անգամ 18-րդ դարում մարդիկ սկըսում են ուսումնասիրել մասսայական հիվանդությունների պատճառները։ Նորից հետաքըրքություն են առաջ բերում հնում ձեռք բերած առողջապահական նվաճումները։ Այդ ժամանակից ել սկսում են սիստեմատիկ պաքար աղտոտությունները վողոցներում թափելու վատ

սովորության դեմ։ Ազատությունների համար սկսում են պատրաստել հատուկ փոսեր, վորոնց պարունակությունը բացատիկ գեպքերում ելին հեռացվում, մեծ մասամբ աղբանորերը ծածկում ելին հողով և նրանց մոտերը նորերը փորում։

Քաղաքների արագ աճումն ու առանձնապես 1810 թ. արտաքնոցների գլուխը, պատճառ դարձավ հոսուն աղբաջրերի խոշոր չափեր ընդունելուն, և հետեանքն այն լեզավ, փոք սկսեցին մասածել նրանց հեռացումը կատարել կոյուղու միջոցով։

Աղբատար խողովակները սովորաբար բացվում ելին մոտակա գետերում, այնպես վոր շատ կարճ ժամանակում այդ գետերը, փորոնք ազգաբնակչության ջրի մատակարարման միակ աղբյուրն ելին համարված էր, չափազանց կեղառառվեցին։ Այդ իսկ պատճառով, անցած դարու կիսում, առաջին անգամ Սնգլիայում, հրատարակվեցին պարտագիր վորոշումներ, մաքրել հոսուն աղբաջրերը, նախ քան նրանց գետի մեջ բաց թողնելը։ Յեվ փորպես անվտանգ դարձնելու լավագույն միջոց, առաջարկվում եր այդ ջրերով վորողել զաշտերը և գյուղատնտեսական մշակման լենթարկեր, փոքի ժամանակ հողը վերստին ստանում ե իր պտղավետությունը։

Անկասկած այդ ձեռվ վոռովված դաշտերը հրակայական տնտեսական նշանակություն ունեն անջրդի վայրերում, ուր ջուրը վոչ պակաս անհրաժեշտ է, քան հողերի պարարտացումը։

Հացահատիկների տարածությունների կրատումը և դրա հետ կապված բամբակի, ճականգեղի ու այլ մշակութների հատկացրած հրակայական հողամասերը, ինչպես և անասունների պակասությունը, մեր առաջ ամենայն սրությամբ դնում են զաշտերի պարարտացման խընդիրը։

Մեզ թվում ե, թե Հայաստանում շատ վայրեր կան, վորոնք գտնվում են նույն պայմաններում։

Շատ կարճ ժամանակամիջոցում կարելի յեանմշակ դրության մեջ գտնվող հողամասեր վերածել պտղավետ զաշտերի, յեթե բացինալ կերպով վոռողվեն հոսուն կեղառառություններով։ Մեր որերի դիտողությունները ցուց են տակիս, վոր կեղառառությունների հեռացման սիստեմի կանոնավոր կազմակերպումը և նրանց հետագա նպատակահարմար ոգտագործումը վնչ միայն իր տնտեսական շահավետ կողմն ունի, այլ և իր սանիստարատողջապահական մեծ նշանակությունը։

Դրա շնորհիվ ե, վոր Արևմտյան Յեվրոպա-

լում մահացությունն ընկել է. նույնը նկատվում է և ԽՍՀՄ-ում: Կանոնավոր կոյուղի ու նեցող Ոդեսսայում, այս դարի սկզբին, հազար հոգուց մեռնում ելին 20-ը, մինչդեռ Սամարայում, ինչպես և այլ քաղաքներում, ուր բացակայում եր մարդկային ազբերի ու կեղուսությունների հեռացման կանոնավոր կազմակերպությունը, մահացության գեպքերը լերկու անգամ ավելի ելին, քան Ռուսայում:

Մեզ մոտ Հայաստանում, ուր բոլորովին բացակայում է մարդաբնակ վայրերից կեղուսությունների կանոնավորված ձեռվ հեռացնելու գործը, սանիստարական միջոցներին զուգընթաց մեղնից պահանջվում է, առաջին հերթին, կազմակերպել այդ գործը:

Թե ի՞նչ յեղանակներով պիտի կեղուսությունները մաքրել, արդյոք դաշտերի վոռովման սիստեմի իրականացմամբ, թե բնագիտական թթվացման միջոցով, կամ թե մի այլ յեղանակով, այդ հարցին կարելի յե պատասխանել միայն տեղական պայմանների վանրակրկիտ ուսումնասիրությունից հետո:

Իհարկե, միշտ ել նկատի պիտի ունենալ, վոր մարդկային կեղուսություններն են պարագացման ամենաթանգարին նյութը, վորը կարու և լավ պահպանման ու ինամքի, հակառակ

գեպքում, նա հեշտությամբ ե կազմակուծվում է, հետեապես, կորցնում իր ոգտակար բաղադրիչ մասերը:

Տնտեսական, ինչպես և սանիստարա-առողջապահագիտական նկատառություններով, անհրաժեշտ ե նշել, վոր բազմահարկանի տներ ունեցող քաղաքի խոշոր կենտրոնների կեղուսությունների հեռացնելը պիտի կատարվի կոյուղային սիստեմով, մինչդեռ սակավ բնակչություն և գյուղագորապես մի հարկանի տներ ունեցող վայրերի համար մատչելի յե փոխադրական սիստեմը: Սակայն, քաղաքի կենտրոնն որինակելի կանալիցացիա ունենալու դեպքում ևս քաղաքամասերն ու հեռավոր արվարձաններն իրենց կեղուսությունները հեռացնելու յեն փոխադրական միջոցներով: Անհրաժեշտ ե նաև նկատի առնել, վոր պարտեզ-քաղաքում, ուր շինությունները նոսր են լինելու, կառուցվելիք կոյուղին մեծ դժվարությունների յե հանդիպելու, առուների միջոցով հոսուն աղբաջրերին ընթացք տալու: Հոսուն աղբաջրերի սակավության պատճառով ջրմուղիներում չի ստացվի հարկավոր քանակությամբ հեղուկ՝ ցանցի ինքնամաքրման համար:

Նկատի առնելով գյուղագորապես ջրայերկրաբանական պայմանները, ինչպես և ՀՍԽՀ առանձին կետերի բնակչության խտությունը, պիտի

գալ այն յեզրակացութիւնն, վոր մարդաբնակ վայրերի մեծամասությունն իրենց կեղտոտությունները հեռացնելու յեն փոխազրական սիստեմով։ Այդ պատճառով, բնական ե, հարց ե ծաղում անմաքրություններն ողատպործել հողերի պարարտացման նպատակների համար։

Հայտնի յէ, վոր կղկղանքային զանգվածի արժեքը վրոշչում ե նրա մեջ պարունակվող ազտաի քանակությամբ։ Ռւատի անժամանակ փոխազրելու և ոգտագործելու դեպքում կազմալուծվում են այդ նյութերը և ազոտի շատ կարեսը մասն՝ ավշակի (ամիսի) յէ փոխվում և վորպես գազ վոչնչանում, իսկ մյուս մասերը, աղերի ձեռվ, ծծվում են հողի մեջ, այն ել անպիսի քանակով, վոր վերջի վերջո բոլոր նյութերի միայն $\frac{1}{10}$ մասն ե բնակելի վայերը ից հեռացվում, իսկ մնացած $\frac{9}{10}$ -ը մնում ե հողի մեջ։ Յեկ այս ձեռվ հողի միջի ջրերն ու ողն ապականվում են ու վարակվում, մի բան, վոր միանգամայն անթուլյատրելի յէ սանիտարական տեսակետից։ Դրա համար ել, նախ և առաջ, անհրաժեշտ է կեղտոտությունների հավաքման համար մշակել բացինալախպիլնդունաբան, հոգալով նաև, վոր ժամանակին արտահանվեն բնակավայրերի սահմաններից։

Մարդու աղբի ու թափթփուկների հեռացնե-

լու ինդիբը մինչ վերջին ժամանակներս ուսումնակրվում եր համարյա սոսկ առողջապահական տեսակետից, միանգամայն անտեսելով նրա տնտեսական ոգտակարություններն այնինչ անհրաժեշտ ե, վոր այդ կեղտոտություններն ոգտագործվեն փորպես պարարտացման նյութ։

Սնկասկած, ինչպես վերն ասացինք, առողջապահության տեսակետից աղտոտությունների հեռացնելու լավագույն միջոցը զա ինքնահոս կոլուղու սփստեմն ե, սակայն վորը միտօմանակ հանդիսանում ե և վոչնչացնող սփստեմ, քանի վոր պարարտացման ամենագնահատելի նյութերը, վերջին հաշվով, թափվում են զետերի և ծովերի մեջ։

Նման անփուլթ վերաբերմունքն արդեն սկսել ե այնպիսի յեռանդուն բողոքներ առաջացնել, վոր մի շարք քաղաքներ, նրանց թվում նաև Մյունիսենն իր որինակելի կոյուղային ցանցով, ստիպված են կեղտոտությունների հեռացնելու նոր սփստեմ կառուցել, ուշադրության առնելով զիմավորապես հարցի տնտեսական կողմը։

Զուգընթաց սրան կանաև չափազանց գեվար լուծելի պրոբլեմ, քանի վոր հարանի յէ, վոր մարդկային թափթփուկները ջրի հետ խառնվելով (մի բան, վոր տեղի ունի մզող կանալիցիալի դեպքում), նրանց պարարտացնող նյու-

թերի արժեքը նվազում է 20% -ով, իսկ գործեազի կեղտոտությունները պահպանեն իրենց պարարտացնող հատկությունները, հարկավոր և նրանց սիստեմատիկաբար մշակել հողով, տուժով, մոխրով և այլն:

Նման ձեռվ ստացված գանգվածը մամլում են և ստանում կոմպոստներ (աղբախառնուրդներ), վորոնք ներկայացնում են կիսաչոր, հողագույն ու անհոտ պարարտացնող նյութի գանգված: Նման ձեռվ մշակված կեղտոտությունից տարեկան ստացվում է մարդաբանութիւն 2 խոր. մետր զանգված, վորպիսի քանակ, ըստ գերմանական հեղինակների, միանգամայն բավարար է 200 քառ. մետր հողամասի ինտենսիվ պարարտացման համար:

Վորպեսզի կարելի լինի պատկերացնել, թե վորչափ մեծ տարածություն կարելի լի պարարտացնել թեկուղ Յերեան քաղաքից արտահանված կեղտոտություններով, պիտի վերը հիշատակված թիվը բազմապատկել 77,324-ով, այսինքն քաղաքի բնակչության թվով: Ստացվում է մոտ 1500 գեսիտախն տարածություն: Այդ թիվն, ինարկե, միայն ստուգիչ նշանակություն ունի: ԶԵ վոր կղկղանքի և մեզի քանակն ու բաղադրությունը կապված է զանագան գործոններից. այն ե՝ ազգաբնակչության սննդի

նյութից, հասակից, սեռից, սննդամթերքների գուրածաբսություններից, ինչպես և բազմաթիվ այլ պատճառներից: Միայն աղպախոի տվյալներ ունենալուց հետո կարելի կինի թիչ թե շատ ուղիղ յեղբակացություն անել այս կամ այս բնակավայրի մարդկային աղբի քանակի մասին: Առանց այդ նախնական դիտողությունների, ամեն յեղբակացություն, յեթե նա հիմնված է միայն միջին թվաբանական տվյալների վրա, կարող ե սխալ հետեւանքների հանդել:

Այս աեսակետից մենք չունենք թվական տըպյաններ Հայաստանի ազգաբնակչության վերաբերյալ, վորոնք մնվում են գլխավորապես բուսեղեն կերակուրներով: Հետեւաբար մենք զուրեւնք հասարակությունից վորևե յեղբակացություն անելու խոշոր շրջանների, որինակ, Յերեանի մարդկային աղբի քանակի մասին: Այսինչ, այս քաղաքի տեղբիտորիան տպականող կեղտոտությունների լրիվ հաշվառման համար, ինչպես և այդ կեղտոտությունների հեռացնելու յեղանակի ընտրությունը, պահանջում են միշտը թե գիճակազրական և թե փորձնական կարգի տեղեկություններ:

Դեռ անցած դարի սկզբին, մի քանի հեռատես հեղինակներ (Մարտիուս և ուրիշներ) ամեն կերպ ձգնում ելին ապացուցել վոր ժա-

մանակի ընթացքում, հողի ուժասպառության շնորհիվ, բերքը պիտի նվազի։ Դրա հետևանքը, նրանց կարծիքով, պիտի լինի զլուղատնաեսության աստիճանական անկումը, իսկ ապա և ազգաբնակչության թվի իջեցումն ու այլասեռումը։ Իրենց հեռատես հայացքները նրանք աշխատում ենին հիմնավորել, ինչպես հայտնի է, վիճակագրական տվյալներով։ Սակայն այդ հեղինակներն աշքաթող ենին արել մի կարևոր հանգամանք, գիտության ու աեխնիկայի հարատե հաղթանակները պայքարի ասպարիզում՝ հանուն լավագույն ապագայի։

Մեզանից ափելի քան 100 տարի առաջ, արդեն կասկածից գուրս եր այն ճշմարտությունը, վոր անհրաժեշտ ե հողին վերադարձնել այն բոլոր նյութերը, վարոնցից բույսը կառուցում ե իր հույսվածքը։ Այդ ճշմարտությունն ապացուցելու համար Լիբեխը գեռ անցած դարու յերեսնական թվականներին ասում եր. «Ազգերի ծագման ու անկման պատճառները մեկ են. հողի պաղավետության հափշտակումն ու վոչնչացումը պայմանավորում ե ազգերի կործանումը, իսկ նրա պաղավետության պահպանումն՝ աղքերի կյանքը, հարստությունը և հզորությունը»։

Բազմաթիվ գիտողությունները տարեց տարի

գալիս են ապացուցելու այն հսկայական նշանակությունը, վոր հողի պարաբռացումն ունի բերքատվության համար։

Այսպես, որինակ՝ ցորենի միջին բերքը Գերմանիայում պրոցեսիվ կերպով աճում եր այն վայրերում, ուր հողը նախորոք վելինվում եր։ Իրեկ լուսաբանություն բերենք հետեւալ տվյալները.

Ցորենի միջին բերքը. —

1770—1870	թ.թ.....	50	փութ
1870—1880	«.....	90	»
1895—1900	«.....	114	»
1905—1910	«.....	120	»
1913 թ.	«.....	140	»

Հողի բացիունակ մշակումը հողին վերադարձնում է բույսի աճման համար ծախսված բոլոր նյութերը. այս ֆաստն ունի շատ կարևոր նշանակություն մեր յերկրի գյուղատնտեսության համար։ Հստ պրոֆ. Դ. Պըտանիշնիկովի ԽՍՀՄ շատ վայրերում նկատվում ե բերբի պրոցեսիվ անկում։ Այսպես, ցորենը պատերազմից առաջ տալիս եր միջին թվով 43,7 փ., իսկ պատերազմից հետո սկսում ե պակասել.

1918 թ.	35,9	փ.
1919 թ.	35,6	»
1920 թ.	29,6	»

Շանոթանալով այս թվերի հետ, դիտենք այժմ,
թե ինչի մասին ենք մտածելու:

Բույսերի համար մննդաբար նյութերով հաղը
հարստացնելու նպատակով գյուղատնտեսական
քիմիան առաջազրում է ազոտի, ֆոսֆորի և
կալիումի զանազան միացումներ: Բայց այդ
նյութերը միակողմանի պարաբռացնող նշանա-
կություն ունեն: Միայն փելինը և մարդկաբին-
ազըն է, զոր կարող են լիակատար արժեք ու-
նեցող նյութեր համարվել: Այսինչ մեզ մոտ այդ
նյութերն ոգտագործվում են միայն հազվագյուտ
գետքերում:

Մինչև վերջին ժամանակներս կեղաստու-
թյունների ոգտագործման լավագույն ձեր հա-
մարկում է գաշտերի նրանցով վուոգման լեղա-
նակը: Այդ լեղանակով կարելի լի ոգավել միայն
այն դեպքում, եթե բաղաքը կանոնավոր կոչուղի
ունի: Այսինչ ամբողջ ԽՍՀՄ ավելի քան 1000
քաղաքից միայն 22-ն ունեն կոլուղի:

Այստեղ պիտի շեշտել և այն, զոր այդ սահի-
տարական սարքավորումն սպասարկում է քա-
ղաքի միայն աննշան մասը: Մեծ մասամբ կեղ-
տոտություններն արտահանվում են ազքահորե-
րից: Դրա համար հենց ալֆմվանից անհրաժեշտ
է ուշազրություն դարձնել աղբահորերի սար-
քավորման և նրանց պարունակության վրա:

Դրա հարկավոր հսկողությունն իրենց վրա լեն վեր-
ցնելու տեղական համապատասխան որգանները:
Կեղտոտությունների հարմար ձերնդունարաններ
մշակելու գործին պիտի մասնակցեն տեխնիկ-
գյուղատնտեսական ուժերը, իսկ նրանց սանի-
տարական հսկողությունն ընկնելու լի համա-
պատասխան որգանների վրա: Դաշտի պարար-
տացման գործի բացիոնալ իրականացումն ամ-
բողջովին թողնվում է ազքոնումների իրավա-
սության: Միայն նրանք են կարող համապատաս-
խան փորձերի վրա վորոշել, թե մի հեկտար
հողին վորքան պարարտացնող նյութ է հար-
կավոր:

Այդպիսով կեղտոտությունների, վորպես պարար-
տացման բարձրորակ նյութի ոգտագործման կազ-
մակերպությունը ներկայումս հանդիսանում է
պետական կարեռություն ունեցող խնդիր, զոր
այսոր առանձնապես խոր և գիտակցվում Գերմա-
նիայում: Իսկ բերքատվության ցածր մակարդա-
կի տեսակետից մեր հետամիաց յերկրի համար
հողի պտղավետության բարձրացումը դասնում
է կենսական հարց: Այդ հարցի անբավարար լու-
ծումը կարող է կարծ ժամանակվա ընթացքում
մեր ամբողջ տնտեսությունները տանել գեպի
անկում:



~~860~~



17.499

Գիբր Յ կրու. (Խ.) 1 գ.



Prof. X. Архипианц
УТИЛИЗАЦИЯ ОТБРОСОВ ЧЕЛОВЕКА В
КАЧЕСТВЕ УДОБРИТЕЛНОГО МАТЕРИАЛА
ДЛЯ ПОЛЕЙ И ОГОРОДОВ

Госиздат ССР Армении

Эривань/ 1930 г.